

Ոչ պաշտոնական թարգմանություն

ՄԱԿ ՓԳՀ դիտարկումները «Քրեական գործերով իրավական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

Ներածություն

Հայաստանի Հանրապետությունում Միավորված ազգերի կազմակերպության փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի (ՄԱԿ ՓԳՀ) ներկայացուցչությունը ուրախ է սույն փաստաթղթով ներկայացնելու իր դիտարկումներն ու մեկնաբանությունները «Քրեական գործերով իրավական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ «Օրենքի նախագիծ») վերաբերյալ, որը ՄԱԿ ՓԳՀ-ին տրամադրվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից 2020 թվականի օգոստոսի 5-ին: ՄԱԿ ՓԳՀ-ի դիտարկումների և առաջարկությունների կիզակետում հիմնականում հանձնման ընթացակարգերի և փախստականների միջազգային պաշտպանության հատման կետում ծագող հարցերն են՝ այն իրավական երաշխիքների ամրապնդման նպատակով, որոնք պետք է կիրառվեն, երբ հայցվում է փախստականների կամ ապաստան հայցողների հանձնումը:

ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է այս դիտարկումները որպես Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից փախստականներին և իր մանդատի ներքո գտնվող այլ անձանց միջազգային պաշտպանություն տրամադրելու և փախստականների խնդրի հարատև լուծումներ գտնելու հարցում կառավարություններին աջակցելու լիազորությամբ օժտված գործակալություն: Ինչպես սահմանված է իր Կանոնադրությամբ, ՄԱԿ ՓԳՀ-ն ապահովում է իր գրասենյակի իրավասության ներքո գտնվող փախստականների պաշտպանությունը, այդ թվում, *«փախստականների պաշտպանության վերաբերյալ միջազգային կոնվենցիաների կնքմանը և վավերացմանը նպաստելով, դրանց իրականացումը վերահսկելով և դրանցում փոփոխություններ կատարելու առաջարկներ ներկայացնելով»*¹: ՄԱԿ ՓԳՀ-ի՝ իր Կանոնադրությամբ սահմանված վերահսկողական լիազորությունը վերահաստատված է Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի (այսուհետ՝ 1951թ. Կոնվենցիա) 35-րդ հոդվածում, համաձայն որի՝ պայմանավորվող պետությունները պարտավորվում են *«համագործակցել Միավորված ազգերի կազմակերպության փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի [...] հետ համապատասխան գործառնությունների իրականացման գործում, և, մասնավորապես, հեշտացնում են սույն Կոնվենցիայի դրույթների կիրառումը վերահսկելու նրա պարտականությունը»*² Նմանատիպ դրույթ

¹ Տես Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի Կանոնադրության 8-րդ մասի (ա) կետը, որը վերանայվել է Գլխավոր ասամբլեայի կողմից 58/153 բանաձևով, 24 փետրվարի 2004թ.: Այն հասանելի է հետևյալ հղումով՝ <https://bit.ly/2p47kBm>:

² ՄԱԿ Գլխավոր ասամբլեա, *Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիա*, 28 հուլիսի 1951թ., Միավորված ազգերի կազմակերպություն, Միջազգային պայմանագրերի շարք, հատոր 189, էջ 137, որը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.refworld.org/docid/3be01b964.html>:

ներառված է Փախստականների կարգավիճակի մասին 1967 թվականի արձանագրության II հոդվածում³:

Այսպիսով՝ ՄԱԿ ՓԳՀ-ի դիտարկումները և հասանելիությունը այս օրենսդրական գործընթացի համատեքստում հետագա խորհրդակցությունների համար հիմնված են այս միջազգային փաստաթղթերի վրա: Ավելին, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (այսուհետ՝ Սահմանադրություն) 81-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները պահանջում են հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի առնել Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան: Ինչպես ներկայացվել է վերը, ՄԱԿ ՓԳՀ-ն ունի Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասում նշված իրավական կարգավիճակին շատ նման կարգավիճակ և, որպես այդպիսին, ակնկալում է արժանանալ համանման մոտեցման⁴:

Ընդհանուր նկատառումներ

ՄԱԿ ՓԳՀ-ն գնահատում է, որ ներկա դժվարին ժամանակներում համապատասխան պետական մարմինները, Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Ազգային ժողովը ջանքեր են գործադրում ազգային օրենսդրության ամրապնդման ուղղությամբ՝ այն մարդու իրավունքներին առնչվող միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով:

Որպես ընդհանուր սկզբունք, Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիան և դրա 1967 թվականի Արձանագրությունը չեն պաշտպանում հանցավոր վարքագիծ դրսևորած ապաստան հայցողներին կամ փախստականներին իրենց արարքների համար քրեական հետապնդումից, ոչ էլ փախստականների վերաբերյալ միջազգային իրավական նորմերն են արգելում նրանց հանձնումը բոլոր հանգամանքներում: Այդուհանդերձ, եթե անձը, ում հանձնումը հայցվում է, ապաստան հայցող կամ փախստական է, հարկավոր է հաշվի առնել նրա հատուկ պաշտպանության կարիքները, երբ որոշվում է այն հարցը, թե արդյոք հանձնումը կարող է տեղի ունենալ⁵:

2018 թվականի հունիսին ՄԱԿ ՓԳՀ-ն համապատասխան մարմիններին և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին արդեն տրամադրել է իր դիտարկումներն ու առաջարկությունները նմանատիպ հարցերի վերաբերյալ «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի և վարչական դատավարության օրենսգրքի

³ ՄԱԿ Գլխավոր ասամբլեա, *Փախստականների կարգավիճակի մասին արձանագրություն*, 31 հունվարի 1967թ., Միավորված ազգերի կազմակերպություն, Միջազգային պայմանագրերի շարք, հատոր 606, էջ 267, որը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.refworld.org/docid/3ae6b3ae4.html>:

⁴ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Հոդված 81. Հիմնական իրավունքներն ու ազատությունները և միջազգային իրավական պրակտիկան.

«1. Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան»: Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.president.am/en/constitution-2015/>:

⁵ ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատար (ՄԱԿ ՓԳՀ), *Ուղղորդող ծանոթագրություն հանձնման և փախստականների միջազգային պաշտպանության վերաբերյալ*, 2008թ. ապրիլ, պարբ. 2, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.refworld.org/docid/481ec7d92.html>:

փոփոխությունների նախագծի համատեքստում⁶: 2019 թվականի սեպտեմբերին ՄԱԿ ՓԳՀ-ն լրացուցիչ առաջարկությունների շարքի միջոցով սատարել է նաև ապաստան հայցողների և փախստականների հատուկ պաշտպանության ռեժիմի դիտարկումը դատական բարեփոխման գործընթացի՝ հանձնմանն առնչվող նախատեսվող քննարկումներում⁷: ՄԱԿ ՓԳՀ-ն տրամադրում է ստորև ներկայացված լրացուցիչ մեկնաբանություններն ու դիտարկումները՝ լրացնելու այն դիտակետերը, որոնք արդիական և կարևոր են ներկա Օրենքի նախագծի համար:

ՄԱԿ ՓԳՀ-ն ողջունում է բազմաթիվ բարեփոխումները, որոնք կատարվել են Օրենքի նախագծում, որոնց նպատակն է ամրապնդել համապատասխան պաշտպանության երաշխիքները, մասնավորապես՝ (i) այն դեպքերում, երբ հանձնման վերաբերյալ հարցումները վերաբերում են ապաստան հայցողներին և փախստականներին (Օրենքի նախագծի 4-րդ հոդված, 22-րդ հոդվածի 4-րդ մաս, 25-րդ հոդվածի 3-րդ մաս և 45-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ). (ii) երեխայի լավագույն շահը հաշվի առնելու անհրաժեշտությունը, երբ որոշվում է նրա հանձնման հարցը (Օրենքի նախագծի 22-րդ հոդվածի 5-րդ մաս). (iii) մահապատժով պատժվող հանցագործություններին (Օրենքի նախագծի 25-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ), խոշտանգման կամ այլ վատ վերաբերմունքի վտանգին (Օրենքի նախագծի 25-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետ), ինչպես նաև անձի բացակայությամբ (*in absentia*) կայացվող դատավճիռներին (Օրենքի նախագծի 30-րդ հոդվածի 2-րդ մաս) առնչվող երաշխիքները. (iv) հանձնման ենթակա անձանց՝ հանձնման ընթացակարգերում բանավոր/գրավոր թարգմանչի անվճար աջակցություն ստանալու, բոլոր համապատասխան փաստաթղթերն իրենց համար հասկանալի լեզվով ստանալու (Օրենքի նախագծի 32-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասեր), ինչպես նաև անվճար իրավաբանական աջակցություն ստանալու իրավունքը (Օրենքի նախագծի 32-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ) և (v) հանձնման նպատակով կալանավորմանը առնչվող երաշխիքները, ինչպես նաև կալանավորման այլընտրանքներին դիմելու հնարավորությունը (Օրենքի նախագծի 33-րդ հոդվածի 8-րդ մաս, 35-րդ հոդվածի 7-րդ մաս և 35-րդ հոդվածի 9-րդ մաս):

Հանձնման նյութական և ընթացակարգային կողմերը ներառող հետևյալ առաջարկությունների խնդիրն է աջակցել հայաստանյան իշխանություններին այնպիսի օրենսդրության ընդունման հարցում, որը կապահովի, որ փախստականներին ու ապաստան հայցողներին առնչվող հանձնման գործերը վարվեն փախստականների և մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային իրավական նորմերին ու չափանիշներին համապատասխան կերպով:

Հատուկ նկատառումներ

1. **Քրեական գործերով իրավական օգնության հիմքում ընկած սկզբունքները (Օրենքի նախագծի 1-ին և 4-րդ հոդվածներ)**

Չվերադարձելիության սկզբունքը

⁶ ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատար (ՄԱԿ ՓԳՀ), *ՄԱԿ ՓԳՀ դիտարկումները հանձնման և ապաստանի մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության փոփոխությունների վերաբերյալ*, 2018թ. հունիս, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.refworld.org/docid/5bd81c584.html>:

⁷ ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատար (ՄԱԿ ՓԳՀ), *ՄԱԿ ՓԳՀ առաջարկությունները ապաստանին առնչվող գործերի վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունում դատական բարեփոխումների համատեքստում*, 2019թ. սեպտեմբեր, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.refworld.org/docid/5e7cd1064.html>:

Օրենքի նախագծի 4-րդ հոդվածում ուղղակիորեն նշվում է «*փախստականներին իրենց ծագման երկիր չհանձնել*»-ը որպես քրեական գործերով իրավական օգնության հիմքում ընկած սկզբունքներից մեկը: ՄԱԿ ՓԳՀ-ն ողջունում է չվերադարձելիության հիմնարար սկզբունքի այս վկայակոչումը, որը ամրագրված է Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի 33-րդ հոդվածի 1-ին մասում և փախստականների միջազգային պաշտպանության ռեժիմի անկյունաքարն է⁸:

Այդուհանդերձ, ՄԱԿ ՓԳՀ-ն նկատում է, որ ընթացիկ ձևակերպմամբ այս դրույթը լիարժեք կերպով չի արտացոլում փախստականների վերաբերյալ միջազգային իրավական նորմերով և ավելի ընդհանուր իմաստով մարդու իրավունքներին առնչվող միջազգային և տարածաշրջանային իրավական նորմերով սահմանված չվերադարձելիության սկզբունքի շրջանակը: Մասնավորապես ՄԱԿ ՓԳՀ-ն նկատում է հետևյալը.

Առաջին՝ Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված չվերադարձելիության սկզբունքը կիրառվում է նաև այն ապաստան հայցողների նկատմամբ, ում հայցերի վերաբերյալ դեռևս որոշում չի կայացվել⁹, մինչդեռ Օրենքի նախագծի 4-րդ հոդվածը նշում է միայն փախստականներին:

Երկրորդ՝ Օրենքի նախագծի 4-րդ հոդվածում նշվում է միայն «*ծագման երկիրը*», մինչդեռ չվերադարձելիության սկզբունքը կիրառվում է ոչ միայն ծագման երկրի, այլև ցանկացած այլ երկրի առնչությամբ, որտեղ առկա են Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի 1-ին հոդվածի Ա մասի 2-րդ կետում սահմանված հիմքերի հետ կապված հետապնդման վտանգներ, կամ որտեղից կարող է հետագա վերադարձ տեղի ունենալ այն երկիր, որտեղ նույնպես գոյություն ունեն նման վտանգներ¹⁰:

Ավելին, Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի 33-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է չվերադարձելիության սկզբունքի որոշակի սահմանափակ բացառություններ փախստականների համար, ինչը նշանակում է, որ կան որոշակի հանգամանքներ, որոնցում փախստականի հանձնումը ծագման երկիր համապատասխանում է փախստականների վերաբերյալ միջազգային իրավական նորմերին: Այդուհանդերձ, նույնիսկ նման դեպքերում կարող են կիրառելի լինել հայցվող պետության՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային և տարածաշրջանային իրավական նորմերով ստանձնած՝ չվերադարձելիության հետ կապված պարտավորությունները՝ նախատեսելով հանձնման պարտադիր արգելք:

Հետևաբար ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է վերաձևակերպել Օրենքի նախագծի 4-րդ հոդվածը չվերադարձելիության սկզբունքի ավելի ընդհանուր վկայակոչման միջոցով, որը կապահովի այս սկզբունքի շրջանակի և շահառուների լիարժեք ներառում: Դա նաև կընդգրկի Հայաստանի՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային և տարածաշրջանային իրավական նորմերից բխող իրավական պարտավորությունները՝ ընդլայնելով

⁸ Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի 33-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «*Պայմանավորվող ոչ մի պետություն փախստականին չի վտարում կամ որևէ կերպ վերադարձնում («վերադարձնում այն երկիր, որտեղից եկել է») այն տարածքների սահմանները, որտեղ նրա կյանքին կամ ազատությանը վտանգ կսպառնար իր ռասայի, կրոնի, քաղաքացիության, որոշակի սոցիալական խմբի պատկանելու կամ քաղաքական կարծիքի հարելու հիմքով*»:

⁹ Տես, օրինակ, ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատար (ՄԱԿ ՓԳՀ), *ՄԱԿ ՓԳՀ Ծանոթագրություն չվերադարձելիության սկզբունքի մասին, 1997թ. նոյեմբեր*, Բաժին Գ, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.refworld.org/docid/438c6d972.html>:

¹⁰ ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատար (ՄԱԿ ՓԳՀ), *Ուղղորդող ծանոթագրություն հանձնման և փախստականների միջազգային պաշտպանության մասին, 2008թ. ապրիլ, պարբ. 12*, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.refworld.org/docid/481ec7d92.html>:

պաշտպանությունն ընդդեմ վերադարձի այն տարածքներ, որտեղ առկա է խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի վտանգ:

ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է Օրենքի նախագծի 4-րդ հոդվածում «փախստականներին իրենց ծագման երկիր չհանձնելու» ձևակերպումը փոխարինել «չվերադարձելիության» բառով:

Գաղտնիությունը

ՄԱԿ ՓԳՀ-ն արձանագրում է, որ անձնական տվյալների պաշտպանությունը երաշխավորելու նպատակով Օրենքի նախագծի 1-ին հոդվածի 4-րդ մասը նախատեսում է անձնական տվյալներ պարունակող տեղեկությունների փոխանակում Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետության իրավասու մարմինների միջև միայն Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերի շրջանակներում:

Մասնավոր կյանքի նկատմամբ հարգանքի սկզբունքը, որը մարդու իրավունքների միջազգային իրավունքի հիմնարար սկզբունք է, երաշխավորում է յուրաքանչյուրի մասնավոր կյանքի իրավունքը և պաշտպանում է անձանց կամայական կամ ապօրինի միջամտությունից¹¹: Օրենքի նախագծի առարկան կազմող հարաբերությունները (պետությունների միջև փոխօգնությունը քրեական արդարադատության ոլորտում) ենթադրում են լայնածավալ փոխգործակցություն և տեղեկությունների փոխանակում օտար երկրների հետ: Ուստի կարևոր է նման փոխհարաբերությունների հիմքում ընկած և դրանք կարգավորող սկզբունքների շարքում ընդգրկել տվյալների պաշտպանությանն առնչվող նորմերի և սկզբունքների վկայակոչում, որը թույլ կտա ապահովել, որ քրեական արդարադատության իրականացման համատեքստում, այդ թվում՝ հանձնման ընթացակարգերում, օտարերկրյա իշխանությունների հետ շփումներում տեղեկատվության ցանկացած փոխանակում տեղի ունենա մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային և տարածաշրջանային իրավական նորմերին, ինչպես նաև տվյալների պաշտպանության սկզբունքներին և չափանիշներին համապատասխան կերպով¹²:

Մասնավոր կյանքի իրավունքը և գաղտնիության պահանջները, որոնք արտացոլված են տվյալների պաշտպանության սկզբունքներում և չափանիշներում, հատկապես կարևոր են ապաստան հայցողների և փախստականների համար, ում իրավիճակը անքակտելիորեն ներառում է ծագման երկրի իշխանությունների կողմից հետապնդման ենթարկվելու վտանգ: Նրանց ապահովությունը կարող է վտանգի տակ դրվել, եթե չապահովվի տեղեկությունների պաշտպանությունը: Ապաստան հայցողի կամ փախստականի՝ ծագման երկրում գտնվող

¹¹ 1948թ. դեկտեմբերի 10-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 12-րդ հոդված, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 17-րդ հոդված, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 16-րդ հոդված, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդված:

¹² ՄԱԿ Մարդու իրավունքների կոմիտե (ՄԻՀ), *ՔՔԲԴ Ընդհանուր մեկնաբանություն թիվ 16. Հոդված 17 (Մասնավոր կյանքի իրավունք), Մասնավոր կյանքի, ընտանիքի, տան և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունքը և պատվի ու հեղինակության պաշտպանությունը*, 8 ապրիլի 1988թ., պարբ. 4 և 7, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.refworld.org/docid/453883f922.html>: Տես նաև, օրինակ, Եվրոպայի խորհուրդ, *Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին կոնվենցիայում փոփոխություններ մտցնող Արձանագրության բացատրական զեկույց*, 10 հոկտեմբերի 2018թ., հասանելի է հետևյալ հղումով՝ <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=0900016808ac91a>:

ընտանիքի անդամների ապահովությանը սպառնացող հնարավոր վտանգները նույնպես կարևոր լրացուցիչ նկատառում են¹³:

Ուստի ՄԱԿ ՓԳՀ-ն վերհիշում է, որ, որպես ընդհանուր կանոն, պետությունները պետք է զերծ մնան հայցող պետության մարմիններին անձի՝ փախստականի կամ ապաստան հայցողի կարգավիճակի մասին տեղեկություններ բացահայտելուց, եթե այդ պետությունը փախստականի կամ ապաստան հայցողի ծագման երկիրն է: Նման տեղեկության բացահայտումը կարող է առաջացնել պաշտպանության հետ կապված ռիսկեր խնդրո առարկա անձի և նրա ընտանիքի անդամների համար, որոնք գուցե շարունակում են մնալ ծագման երկրում, և չի կարող համարվել անհրաժեշտ կամ համաչափ հանձնման ընթացակարգի համատեքստում: Նման բացահայտումը կհամարվի մասնավոր կյանքի իրավունքի, ինչպես նաև տվյալների պաշտպանության սկզբունքների և չափանիշների խախտում: Այդուհանդերձ, անհրաժեշտության և համաչափության ստուգում պետք է իրականացվի նաև այն իրավիճակներում, երբ հայցող պետությունը ծագման երկիրը չէ:

Հաշվի առնելով ապաստան հայցողների և փախստականների հատուկ պաշտպանության կարիքները՝ մասնավոր կյանքի իրավունքի և անձնական տվյալների պաշտպանության խախտման դեմ կարևոր երաշխիք կլինի այն, որ Օրենքի նախագծում լրացուցիչ մանրամասն կերպով շարադրվի, որ ապաստանի հայցի կամ փախստականի կարգավիճակի, այդ թվում՝ ապաստանի հայց ներկայացված լինելու բուն փաստի վերաբերյալ որևէ տեղեկություն չպետք է տրամադրվի հանձնում հայցող պետությանը: Հաշվի առնելով այն, որ ՄԱԿ ՓԳՀ-ն ապաստան հայցողի գործով գործնականում արձանագրել է գաղտնիության սկզբունքի խախտում մի մարմնի կողմից, որը հանձնման ընթացակարգի իրականացման համար ուղղակիորեն պատասխանատու մարմինը չէր, նաև խորհուրդ է տրվում սահմանել հանձնման հարցերով իրավասու մարմինների՝ այլ դերակատարների կողմից տվյալների բացահայտումը կանխելուն ուղղված համապատասխան միջոցներ ձեռնարկելու պարտականությունը:

ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է Օրենքի նախագծի 1-ին հոդվածի 4-րդ մասը լրացնել հետևյալ դրույթով.

«Ապաստանի հայցի կամ իրավական կարգավիճակի, այդ թվում՝ ապաստանի հայց ներկայացված լինելու բուն փաստի մասին տեղեկություններ չեն տրամադրվում հանձնման վերաբերյալ հարցում ներկայացրած պետությունը՝ տվյալների պաշտպանության հիմնական՝ անհրաժեշտության և համաչափության սկզբունքների համաձայն, եթե այդ պետությունը ապաստան հայցողի կամ փախստականի ծագման երկիրն է: Բոլոր մյուս դեպքերում նման տեղեկությունների տրամադրումը պետք է ենթարկվի անհրաժեշտության և համաչափության ստուգման՝ հաշվի առնելով վտանգի տակ գտնվող մարդու հիմնարար իրավունքները: Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ, որպեսզի ապահովեն մասնավոր կյանքի իրավունքի և գաղտնիության պահպանումը Հայաստանի Հանրապետության բոլոր մարմինների կողմից քրեական գործերով իրավական օգնության ընթացքում»:

Ավելին, ՄԱԿ ՓԳՀ-ն ուրախությամբ նշում է, որ Օրենքի նախագծի 32-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսվում է հնարավորություն սահմանափակելու այցելությունները

¹³ Նույն տեղում 10, պարբ. 57-58 և 69. ՄԱԿ փախստականների հարցերով գերագույն հանձնակատար (ՄԱԿ ՓԳՀ), ՄԱԿ ՓԳՀ խորհրդատվական կարծիք ապաստանի վերաբերյալ տեղեկատվության առնչվող գաղտնիության կանոնների մասին, 31 մարտի 2005թ., հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.refworld.org/docid/42b9190e4.html>:

կալանավորված անձանց մոտ, ում հանձնումը հայցվում է, ելնելով վերջիններիս անվտանգության նկատառումներից: Մշտադիտարկման իր գործունեության ընթացքում ՄԱԿ ՓԳՀ-ն պարբերաբար ստացել է հաղորդումներ ապաստան հայցողներից, որոնք պնդել են, որ ի վիճակի չեն մերժելու իրենց ծագման երկրի դիվանագիտական ներկայացուցչությունների ներկայացուցիչների այցելությունները այն փաստի պատճառով, որ նրանք նախօրոք տեղեկացված չեն լինում նման այցելությունների մասին, և նրանց չի տրվում մերժելու հնարավորություն: Այս մտահոգություններից ելնելով՝ ՄԱԿ ՓԳՀ-ն ցանկանում է առաջարկել 32-րդ հոդվածի 4-րդ մասում ներառել ավելի ուղղակի երաշխիքներ, որոնցով կնախատեսվի, որ ապաստան հայցողներին ու փախստականներին հարկավոր է նախօրոք ծանուցել նրանց ծագման երկրների ներկայացուցիչների այցելությունների մասին և ստանալ դրանց վերաբերյալ նրանց համաձայնությունը:

ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է Օրենքի նախագծի 32-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել հետևյալ դրույթով.

«Ժամանակավոր կալանավորված կամ հանձնելու համար կալանավորված ապաստան հայցողները և փախստականները նախապես տեղեկացվում են իրենց ծագման երկրների ներկայացուցիչների այցելությունների մասին, որոնք թույլատրվում են միայն ապաստան հայցողի կամ փախստականի ուղղակիորեն արտահայտված գրավոր համաձայնության դեպքում»:

2. Փախստականների վերաբերյալ միջազգային իրավական նորմերից և մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային և տարածաշրջանային իրավական նորմերից բխող երաշխիքները հանձնման դեմ (Օրենքի նախագծի 22-րդ, 25-րդ, 29-րդ և 45-րդ հոդվածներ)

Օրենքի նախագծի 25-րդ հոդվածը [Հանձնումը մերժելը Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի առկայության դեպքում]

Հաշվի առնելով ծագման երկիր և երրորդ երկիր հանձնման դեմ երաշխիքների շրջանակը, որոնք չվերադարձելիության սկզբունքի ուժով տարածվում են ապաստան հայցողների և փախստականների վրա¹⁴, կարևոր է այդ երաշխիքները ազգային օրենսդրության մեջ արտացոլել հնարավորինս հստակ և ուղղակիորեն: Մրա նպատակն է ապահովել, որ իրավասու մարմինները թույլ չտան փախստականի կամ ապաստան հայցողի հանձնումը, եթե դա անհամատեղելի է պետության՝ փախստականների և մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային և տարածաշրջանային իրավական նորմերով սահմանված չվերադարձելիության պարտավորությունների հետ¹⁵:

Մասնավորապես՝ փախստականների դեպքում կարևոր է Օրենքի նախագծի 25-րդ հոդվածում նախատեսել հանձնումը մերժելու պարտադիր հիմք, ինչը նաև կապահովի, որ փախստականները կարողանան օգտվել Օրենքի նախագծով նախատեսված այլ երաշխիքներից, ինչպես օրինակ՝ կալանավորման դեմ երաշխիքներն են, քանի որ համապատասխան դրույթներում հղում է կատարվում է 25-րդ հոդվածին:

Այս համատեքստում ՄԱԿ ՓԳՀ-ն արձանագրում է Օրենքի նախագծի 25-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետում հետևյալ դրույթի ներառման մասին.

¹⁴ Նույն տեղում 10, պարբ. 24-30:

¹⁵ Նույն տեղում 10, պարբ. 39:

«3. Եթե Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրով այլ բան սահմանված չէ, ապա անձի հանձնման վերաբերյալ օտարերկրյա պետության իրավասու մարմնի հարցումը կարող է մերժվել.

1) եթե հիմնավոր պատճառներ կան ենթադրելու, որ հանձնումը պահանջվել է հայցվող անձի ռասայական, կրոնական, ազգային, որոշակի սոցիալական խմբի պատկանելության կամ քաղաքական կարծիքի պատճառով քրեական հետապնդում իրականացնելու կամ պատժի կիրառման համար,»:

ՄԱԿ ՓԳՀ-ն նկատում է, որ այս դրույթը կրկնում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի ձևակերպումը¹⁶: Այն նաև որոշակի նմանություն ունի Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված Հանձնման մասին 1957 թվականի եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի 2-րդ մասի այսպես կոչված «խտրականության դրույթով» նախատեսված մերժման երկու հիմքերից առաջինի հետ¹⁷:

Մինչդեռ Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի 33-րդ հոդվածի 1-ին մասի չվերադարձելիության դրույթից ոգեշնչված այս դրույթի ներառումը ողջունվում է, ՄԱԿ ՓԳՀ-ն, այնուամենայնիվ, նկատում է, որ իր ներկա ձևակերպմամբ Օրենքի նախագծի 25-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետն ամբողջությամբ չի արտացոլում փախստականների վերաբերյալ միջազգային իրավական նորմերով սահմանված չվերադարձելիության սկզբունքի շրջանակը հետևյալ պատճառներով.

ա. Ներկա ձևակերպմամբ Օրենքի նախագծի 25-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջարկվող պաշտպանության շրջանակը սահմանափակ է այն իմաստով, որ այն վերաբերում է միայն այն դեպքերին, երբ հայցվող անձի հանձնումը հայցվել է դրույթում նշված մեկ կամ մեկից ավելի պատճառներով պայմանավորված քրեական հետապնդման կամ պատժի նպատակով: Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի 1-ին հոդվածի Ա մասի 2-րդ կետի և «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի սահմանման իմաստով փախստականին առաջարկվող պաշտպանությունը շատ ավելի լայն է և կիրառվում է ցանկացած հանգամանքներում, որոնցում ողջամիտ հնարավորություն կա, որ խնդրո առարկա անձը ենթարկվելու է հետապնդման փախստականի սահմանման մեջ նշված պատճառներից մեկով: Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի 33-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված չվերադարձելիության սկզբունքը գործում է որպես փախստականի հանձնման արգելք նաև այն դեպքերում, երբ նա հայտնվելու է հետապնդման վտանգի տակ հանձնման մասին հարցման առիթը հանդիսացող քրեական վարույթի հետ կապ չունեցող պատճառներով¹⁸: Այդուհանդերձ, ՄԱԿ ՓԳՀ-ն նաև նշում է, որ Հանձնման

¹⁶ Քրեական օրենսգրքի այս դրույթի վերաբերյալ ՄԱԿ ՓԳՀ-ի դիտարկումները ներկայացվել են նաև հետևյալ փաստաթղթում՝ ՄԱԿ փախստականների հարցերով զբաղվող հանձնակատար (ՄԱԿ ՓԳՀ), *ՄԱԿ ՓԳՀ դիտարկումները Հայաստանի Հանրապետության քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի վերաբերյալ*, 29 հունվարի 2020թ., բաժին 1.1, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.refworld.org/docid/5ee355c64.html>.

¹⁷ Հանձնման մասին եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ հանձնման վերաբերյալ հարցումը չի բավարարվում, «եթե հայցվող կողմը ունի փաստացի հիմքեր ենթադրելու, որ սովորական քրեական հանցագործության համար արված հանձնման հարցումը ներկայացվել է անձին իր ռասայի, կրոնի, ազգության կամ քաղաքական հայացքների պատճառով հետապնդման կամ պատժի ենթարկելու նպատակով, կամ որ այդ անձի վիճակը կարող է տուժել այս պատճառներից որևէ մեկով պայմանավորված»:

¹⁸ Հանգամանքներից կախված՝ նման դեպքերում կարող է պահանջվել ապաստանի հարցերով զբաղվող լիազոր մարմնի կողմից փախստականի կարգավիճակի համար անձի համապատասխանության (վերա)քննություն, եթե առկա են ցուցիչներ, որ անձը, հնարավոր է, կատարել է Փախստականների կարգավիճակի մասին 1951

մասին եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի 2-րդ մասի «խտրականության դրույթի» շրջանակը, որի օրինակով թեկուզ մասամբ կարծես թե ձևակերպված է Օրենքի նախագծի նոր դրույթը, չի սահմանափակվում փախստականներով: Ուստի չնայած այս դրույթն ու փախստականի սահմանումը զգալիորեն համընկնում են, կարող են նաև լինել իրավիճակներ, երբ այն չի կանխելու փախստականի հանձնումը այնտեղ, որտեղ առկա է հետապնդման վտանգ, և, որպես այդպիսին, չի կարելի համարել, որ դրա միջոցով լիարժեք կերպով ապահովվում է Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի և «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի չվերադարձելիության սկզբունքի գործողությունը:

բ. Օրենքի նախագծի 25-րդ հոդվածի 3-րդ մասում նոր ներառված մերժման հիմքերը կիրառվում են, «եթե Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրով այլ բան սահմանված չէ»: Չնայած ուղղակիորեն չի նշվում, ՄԱԿ ՓԳՀ-ն համատեքստից հասկանում է, որ սա վերաբերում է հանձնման մասին միջազգային (երկկողմ կամ բազմակողմ) պայմանագրերին կամ այլ միջազգային պայմանագրերին, որոնք պարունակում են դրույթներ, որոնք կարող են ծառայել որպես դրանք վավերացրած պետությունների միջև հանձնման հիմք:

Այս համատեքստում ՄԱԿ ՓԳՀ-ն ցանկանում է վերահաստատել, որ Հայաստանի՝ փախստականների և մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային և տարածաշրջանային իրավական նորմերով ստանձնած պարտավորությունները, որոնք կազմում են հանձնումը կարգավորող իրավական շրջանակի մի մասը, այդ թվում, մասնավորապես, հանձնման պարտադիր արգելքները այն դեպքերում, երբ դրանով խախտվելու են երկրի՝ միջազգային իրավունքով սահմանված՝ չվերադարձելիության հետ կապված պարտավորությունները, գերակայում են հանձնման վերաբերյալ երկկողմ կամ բազմակողմ միջազգային պայմանագրերի վրա հիմնված՝ հանձնելու ցանկացած պարտավորության նկատմամբ¹⁹: Ուստի փախստականի կարգավիճակը որպես հանձնման վերաբերյալ հարցման մերժման հիմք սահմանող դրույթի ձևակերպումը պետք է Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի 33-րդ հոդվածի չվերադարձելիության սկզբունքին համապատասխան պաշտպանություն նախատեսի²⁰: Սա հավասարապես վերաբերում է հայցվող անձին խոշտանգման կամ այլ ծանր վնասի ենթարկելու արգելքի վրա հիմնված հանձնման մերժման նկատմամբ: ՄԱԿ ՓԳՀ-ն նաև նշում է, որ փախստականների վերաբերյալ միջազգային իրավական նորմերի համաձայն չվերադարձելիության հետ կապված պարտավորությունները կիրառվում են հետապնդման վտանգի կապակցությամբ, որն առկա է փախստականի ծագման երկրում, ինչպես նաև ցանկացած այլ երկրում, որտեղ կարող է գոյություն ունենալ Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայում նշված մեկ կամ մեկից ավելի հիմքերով պայմանավորված հետապնդման վտանգ: Նույնը վերաբերում է հանձնման արգելքին, որը հիմնված է մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային և տարածաշրջանային իրավական նորմերի այն արգելքի վրա, համաձայն որի անձը չի կարող հեռացվել այն տարածք, որտեղ առկա է խոշտանգման կամ այլ ծանր

թվականի կոնվենցիայի բացառման որևէ դրույթի շրջանակի մեջ մտնող արարքներ կամ մասնակցել է դրանց կատարմանը, կամ եթե համապատասխան ընթացակարգերում հաստատվում է, որ կիրառելի է Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի 33-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ չվերադարձելիության սկզբունքի բացառություններից մեկը:

¹⁹ Նույն տեղում 10, պարբ. 21-23:

²⁰ Ինչպես նշվել է վերը, միակ բացառությունները Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի 33-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ չվերադարձելիության սկզբունքի բացառություններն են:

վնասի վտանգ, ինչը կիրառելի է բոլոր անձանց, այդ թվում՝ փախստականների և ապաստան հայցողների նկատմամբ և ենթակա չէ բացառությունների²¹:

գ. Օրենքի նախագծի 25-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ հանձնումը «կարող է մերժվել» 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հանգամանքներում: Սա ենթադրում է, որ փախստականների դեպքում (և այլոց դեպքում, ում նկատմամբ կարող են կիրառելի լինել տվյալ դրույթները) հանձնման մերժումը գտնվում է հանձնման հարցերով զբաղվող մարմնի հայեցողության ներքո: ՄԱԿ ՓԳՀ-ն վերահաստատում է, որ փախստականների միջազգային իրավունքում չվերադարձելիության սկզբունքը պարտադիր արգելք է սահմանում Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի 33-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պաշտպանությունից օգտվող փախստականի հանձնման համար ցանկացած երկիր, որտեղ նա կարող է ենթարկվել հետապնդման կամ այնպիսի տարածք հաջորդիվ հեռացվելու համար, որտեղ առկա է նման հետապնդման վտանգ՝ բացառելով հարցվող պետության մարմինների հայեցողությունը: Նմանապես մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային և տարածաշրջանային իրավական նորմերով նախատեսված վերադարձի արգելքը, ըստ որի՝ անձը չի կարող վերադարձվել այն տարածք, որտեղ առկա է խոշտանգման կամ այլ ծանր վնասի վտանգ, պարտադիր մերժման հիմք է, որը կիրառելի է դրա շրջանակի մեջ մտնող ցանկացած անձի, այդ թվում՝ փախստականների և ապաստան հայցողների նկատմամբ:

Այսպիսով՝ ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է Օրենքի նախագծի 25-րդ հոդվածում ներառել պարտադիր մերժման հիմք չվերադարձելիության սկզբունքից օգտվող փախստականների համար: Հաշվի առնելով այն, որ երրորդ երկիր անձի հանձնման մասին որոշման կայացումը ենթադրում է ռիսկերի գնահատում (օրինակ՝ հարցումը ներկայացրած պետությունում առկա ռիսկեր և ծագման երկիր հետագա վերադարձի վտանգ) հանձնման հարցերով իրավասու մարմնի կողմից, կարող է տեղին լինել նման գնահատումն իրականացնել ապաստանի հարցերով Հայաստանի Հանրապետության իրավասու մարմնի հետ խորհրդակցելով: ՄԱԿ ՓԳՀ-ն նկատում է, որ խորհրդակցային գործընթացի միջոցով նման որոշումների կայացումը համահունչ է Օրենքի նախագծի ոգուն (օրինակ՝ դատապարտյալների փոխանցման վերաբերյալ որոշում կայացնելիս կիրառելի պարտադիր չափորոշիչները սահմանող 58-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը):

ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է

- Վերաձևակերպել 25-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին նախադասությունը հետևյալ կերպ. «Հանձնման վերաբերյալ օտարերկրյա պետության իրավասու մարմնի հարցումը մերժվում է. (...)».
- 25-րդ հոդվածի 3-րդ մասում ավելացնել մերժման պարտադիր հիմք հետևյալ բովանդակությամբ. «եթե հանձնման վերաբերյալ հարցումը ներկայացրած օտարերկրյա պետությունը չվերադարձելիության սկզբունքի պաշտպանությունից օգտվող փախստականի ծագման երկիրն է կամ երրորդ երկիր, որտեղ փախստականը կարող է ենթարկվել վտանգների «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով կամ հաջորդիվ այնպիսի տարածք հեռացվելու վտանգի, որտեղ առկա է նման սպառնալիք: Փախստականին ոչ իր ծագման երկիր հանձնելու մասին որոշում կայացնելիս Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը հաշվի է առնում ապաստանի հարցերով Հայաստանի Հանրապետության իրավասու մարմնի կարծիքը»:

²¹ Նույն տեղում 10, պարբ. 17, 24 և 26:

Օրենքի նախագծի 45-րդ հոդվածը [Հանձնումը մերժելու հիմքերը Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի բացակայությանը՝ փոխադարձության հիման վրա]

ՄԱԿ ՓԳՀ-ն արձանագրում է, որ հայեցողության հետ կապված նույն խնդիրը առկա է Օրենքի նախագծի 45-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի ձևակերպման մեջ, որոնք կարգավորում են հանձնման վերաբերյալ հարցման մերժման հիմքերը միջազգային պայմանագրի բացակայության պայմաններում: Ավելին, 45-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը վերաբերում է միայն այն անձանց, ովքեր ձեռք են բերել ապաստանի իրավունք կամ փախստականի կարգավիճակ Հայաստանի Հանրապետությունում: ՄԱԿ ՓԳՀ-ն վերահաստատում է, որ չվերադարձելիության սկզբունքը կիրառվում է նաև այլ պետությունների, ինչպես նաև իր մանդատի համաձայն ՄԱԿ ՓԳՀ կողմից փախստական ճանաչված անձանց նկատմամբ²²: Փախստականի կարգավիճակի արտատարածքային ուժը ճանաչված է նաև «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով²³: Մինչև ժամանակ, եթե փախստականների պաշտպանության երաշխիքները պատշաճ կերպով արտացոլվեն 25-րդ հոդվածում, անհրաժեշտություն չի լինի համապատասխան դրույթը կրկնելու 45-րդ հոդվածում, քանի որ այն արդեն իսկ պարունակում է 25-րդ հոդվածի վկայակոչում, և այդ պարագայում ՄԱԿ ՓԳՀ-ն կառաջարկեր Օրենքի նախագծից հանել 45-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերը:

ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է վերը նշված առաջարկության համաձայն 25-րդ հոդվածի 3-րդ մասը փոփոխելուց հետո Օրենքի նախագծից հանել 45-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերը:

Օրենքի նախագծի 22-րդ հոդվածը [Օտարերկրյա պետության տարածքում հանցանք կատարած և Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնաբերված անձանց հանձնումը]

ՄԱԿ ՓԳՀ-ն արձանագրում է, որ Օրենքի նախագծի 22-րդ հոդվածի 4-րդ մասում արտացոլված է չվերադարձելիության սկզբունքից բխող երաշխիք հանձնման դեմ: ՄԱԿ ՓԳՀ-ն բարձր է գնահատում, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալի հետ 2020 թվականի հունիսի 19-ին տեղի ունեցած խորհրդակցությունից հետո Օրենքի նախագծի 22-րդ հոդվածի 4-րդ մասը լրացվել է, ինչի արդյունքում հանձնման դեմ երաշխիքը տարածվում է նաև ապաստան հայցողների վրա՝ չվերադարձելիության սկզբունքի համաձայն, որը կիրառվում է ապաստանի համար դիմած անձի նկատմամբ ապաստանի ընթացակարգի ողջ ընթացքում²⁴: ՄԱԿ ՓԳՀ-ն ողջունում է այս դրույթում այնպիսի երաշխիքի ներառումը, որով պահանջվում է գրավոր հավաստիացում առ այն, որ փախստականը կամ ապաստան հայցողը հաջորդիվ չի վերադարձվելու կամ հանձնվելու ծագման երկիր, երբ հանձնման վերաբերյալ հարցումը ներկայացվում է երրորդ երկրի կողմից: Սա կարևոր պաշտպանություն է չվերադարձելիության սկզբունքի հնարավոր խախտումներից: Այդուհանդերձ, ՄԱԿ ՓԳՀ-ն

²² Նույն տեղում 10, պարբ. 55-56:

²³ Հայաստան. 2008թ. թիվ ՀՕ-211-Ն օրենք «Փախստականների և ապաստանի մասին» (2015թ.) [Հայաստան], 27 նոյեմբերի 2008թ., <http://www.refworld.org/docid/4f1986412.html>:

²⁴ ՄԱԿ փախստականների հարցերով գերագույն հանձնակատար (ՄԱԿ ՓԳՀ), ՄԱԿ ՓԳՀ ծանոթագրություն չվերադարձելիության սկզբունքի վերաբերյալ, 1997թ. նոյեմբեր, բաժին Գ, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.refworld.org/docid/438c6d972.html>:

նշում է, որ այս համատեքստում անձի հանձնումը հայցող պետության կողմից տրված ցանկացած գրավոր հավաստիացում պետք է գնահատվի բոլոր համապատասխան հանգամանքների լույսի ներքո (հավելյալ տես նաև ստորև Օրենքի նախագծի 29-րդ հոդվածի վերաբերյալ բաժինը): Այսպիսով՝ համապատասխան երաշխիքն ընդդեմ երրորդ երկիր հեռացման, որտեղ առկա է վտանգ, որ անձը կարող է հեռացվել ծագման երկիր, պետք է ձևակերպվի այնպես, որ ենթադրի նման գնահատում:

Ավելին, ինչպես արդեն նշվել է, փախստականների և մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային իրավական նորմերով սահմանված չվերադարձելիության սկզբունքի համաձայն, հայցվող պետությունը նաև պետք է համոզվի, որ հանձնման արդյունքում փախստականը կամ ապաստան հայցողը չի ենթարկվելու հետապնդման, խոշտանգման կամ այլ անդառնալի վնասի հենց երրորդ երկրում, որը հայցում է հանձնումը²⁵:

22-րդ հոդվածի 4-րդ մասի համապատասխան երաշխիքը պետք է փոփոխվի համապատասխանաբար: Եթե 25-րդ հոդվածի 3-րդ մասը վերանայվի՝ վերը նշված առաջարկությանը համապատասխան ներառելով մերժման պարտադիր հիմք փախստականների համար, ապա այդ դեպքում կարիք չի լինի փախստականներին հիշատակելու 22-րդ հոդվածի 4-րդ մասում:

ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է վերաձևակերպել 22-րդ հոդվածի 4-րդ մասը հետևյալ կերպ.
«Ապաստան հայցողը չի կարող հանձնվել իր ծագման երկիր մինչև ապաստանի հայցի վերաբերյալ վերջնական որոշման կայացումը, այդ թվում՝ դատական վերանայման՝ ընթացակարգի ավարտը: Ապաստան հայցողը կարող է հանձնվել երրորդ երկիր՝ բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է ողջամիտ հնարավորություն, որ այդ երկրում նա ենթարկվելու է վտանգների «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով կամ հաջորդիվ հեռացվելու է այնպիսի տարածք, որտեղ առկա է նման սպառնալիք: Ապաստան հայցողին ոչ իր ծագման երկիր հանձնելու մասին որոշում կայացնելիս Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը հաշվի է առնում ապաստանի հարցերով Հայաստանի Հանրապետության իրավասու մարմնի կարծիքը»:

Օրենքի նախագծի 29-րդ հոդվածը [Անձի հանձնման համար երաշխիքների տրամադրումը]

ՄԱԿ ՓԳՀ-ն ողջունում է 29-րդ հոդվածի 1-ին մասի ձևակերպումը, որով հանձնման վերաբերյալ հարցումը քննարկող պետական մարմիններին լիազորություն է տրվում գնահատելու, թե արդյոք հայցող պետությունից ստացված երաշխիքները «բավարար և ընդունելի» են:

Այդուհանդերձ, Օրենքի նախագծի 29-րդ հոդվածի 2-րդ մասի և, մասնավորապես, դրա ներածական մասի ձևակերպումից կարծես թե բխում է, որ երաշխիքները համարվում են «բավարար և ընդունելի» հայցող պետության կողմից դրանք գուտ ներկայացված լինելու փաստի ուժով՝ առանց համապատասխան ռիսկերի վերացման առումով դրանց համապատասխանությունն ու հուսալիությունը գնահատելու անհրաժեշտության: Սա կարող է որոշակի տարրնթերցում առաջացնել՝ հաշվի առնելով 29-րդ հոդվածի 1-ին մասում գործածվող ձևակերպումը, որը ենթադրում է, որ նման գնահատում պետք է իրականացվի: Դինավագիտական հավաստիացումների ընդունումը որպես հուսալի՝ առանց պատշաճ գնահատման, տեղին չէ և կարող է հանգեցնել չվերադարձելիության սկզբունքի խախտման:

²⁵ Նույն տեղում 10, պարբ. 26:

ՄԱԿ ՓԳՀ-ի կարծիքով՝ դիվանագիտական հավաստիացումներին չպետք է կշիռ տրվի, երբ փախստականը, որը օգտվում է Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի 33-րդ հոդվածի 1-ին մասի պաշտպանությունից, ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերադարձվում է ծագման երկիր: Մրա պատճառն այն է, որ ապաստանի երկիրն արդեն իսկ որոշել է, որ անձն իր ծագման երկրում հետապնդման ենթարկվելու հիմնավոր երկյուղ է ունեցել: Երբ փախստականի հանձնումը հայցվում է մի երկրի կողմից, որը նրա ծագման երկիրը չէ, ցանկացած դիվանագիտական հավաստիացում պետք է գնահատվի²⁶, այդ թվում՝ համապատասխան ժամանակահատվածում ընդունող պետությունում տիրող մարդու իրավունքների ընդհանուր իրավիճակի և դիվանագիտական հավաստիացումների կամ նմանատիպ միջոցառումների հետ կապված ցանկացած պրակտիկայի լույսի ներքո²⁷: Ինչ վերաբերում է ապաստան հայցողին, հավաստիացումները պետք է դիտարկվեն որպես ապաստանի հայցի վերաբերյալ որոշման կայացման համատեքստում հասանելի բոլոր տեղեկությունների մի մաս՝ վերը շարադրվածին համապատասխան²⁸:

Տարբերությունից խուսափելու և ապահովելու համար Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների կողմից հանձնման վերաբերյալ հարցում ներկայացրած պետության տված երաշխիքների արդյունավետ գնահատումը, **ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է Օրենքի նախագծի 29-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասությունը փոփոխել հետևյալ կերպ.**
«Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները կարող են պահանջել և գնահատել հետևյալ երաշխիքները. (...):»

3. Ընթացակարգային չափանիշները

3.1. Ապաստանի ընթացակարգերի հասանելիությունը

Ապաստանի վերաբերյալ տեղեկությունների գործուն և արդյունավետ հասանելիությունը ապաստան հայցելու իրավունքի ապահովման և չվերադարձելիության հետ կապված պարտավորությունների կատարման կարևոր երաշխիք է: Մարդու իրավունքների

²⁶ Խոշտանգումների դեմ կոմիտե, *Եզրափակիչ դիտարկումներ Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության հինգերորդ պարբերական զեկույցի վերաբերյալ*, որն ընդունվել է Կոմիտեի կողմից իր հիսուներորդ նստաշրջանի ժամանակ (6-31 մայիսի 2013թ.) ՄԱԿ փաստ. CAT/C/GBR/CO/5, պարբ. 18, հասանելի է հետևյալ հղումով՝ <http://bit.ly/2FWrD8K>; Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի հարցերով հատուկ զեկույցող, *Միջանկյալ զեկույց Գլխավոր ասսանդլեային*, ՄԱԿ փաստ. A/60/316, 30 օգոստոսի 2005թ., պարբ. 51, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.refworld.org/pdfid/43f30fb40.pdf>:

²⁷ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներ, այդ թվում՝ *Օթմանն (Աբու Քաթադա) ընդդեմ Միացյալ Թագավորության*, Դիմում թիվ 8139/09, Եվրոպայի խորհուրդ. Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 17 հունվարի 2012թ., հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.refworld.org/cases,ECHR,4f169dc62.html>, *Չահայն ընդդեմ Միացյալ Թագավորության*, 70/1995/576/662, Եվրոպայի խորհուրդ. Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 15 նոյեմբերի 1996թ., հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.refworld.org/cases,ECHR,3ae6b69920.html>, *Սոերինգն ընդդեմ Միացյալ Թագավորության*, 1/1989/161/217, Եվրոպայի խորհուրդ. Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 7 հուլիսի 1989թ., հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.refworld.org/cases,ECHR,3ae6b6fec.html>: Տես նաև՝ *Ահմեդ Հուսեյն Մուստաֆա Քամիլ Ազիզան ընդդեմ Շվեդիայի*, CAT/C/34/D/233/2003, ՄԱԿ Խոշտանգումների դեմ կոմիտե, 24 մայիսի 2005թ., հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.refworld.org/cases,CAT,42ce734a2.html>, տես նաև՝ ՄԱԿ փախստականների հարցերով զերագույն հանձնակատար (ՄԱԿ ՓԳՀ), *ՄԱԿ ՓԳՀ ծանոթագրություն դիվանագիտական հավաստիացումների և փախստականների միջազգային պաշտպանության վերաբերյալ*, 2006թ. օգոստոս, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.refworld.org/docid/44dc81164.html>:

²⁸ Նույն տեղում 10, պարբ. 32:

Եվրոպական դատարանը գտել է, որ տեղեկությունների հասանելիության պակասը մեծ խոչընդոտ է ապաստանի ընթացակարգերից օգտվելու համար: Այն բազմաթիվ առիթներով ընդգծել է, թե որքան կարևոր է երաշխավորել հեռացման (որի հետևանքները, հնարավոր է, անդառնալի լինեն) ենթակա յուրաքանչյուր անձի՝ բավարար տեղեկություններ ստանալու իրավունքը, որպեսզի նրան հնարավորություն տրվի ձեռք բերելու համապատասխան ընթացակարգերի արդյունավետ հասանելիություն և հիմնավորելու իր բողոքը²⁹:

Ուստի ՄԱԿ ՓԳՀ-ն խորհուրդ է տալիս Օրենքի նախագծում ներառել դրույթներ, որոնցով կպահանջվի, որ համապատասխան պետական մարմինները (գլխավոր դատախազությունը, արդարադատության նախարարությունը, անձանց ձերբակալություն իրականացնող մարմինները և հանձնման մասին որոշումների վերաբերյալ բողոքներ ու կալանավորման վերաբերյալ միջնորդություններ/բողոքներ քննող դատարանները) ապաստանի ընթացակարգի մասին տեղեկություններ տրամադրեն այն անձանց, ում հանձնումը հայցվում է, և ապաստանի հայցի դեպքում՝ այն անհապաղ ուղղորդեն ապաստանի հայցեր քննող մարմին: Սա հատկապես կարևոր է հանրային պաշտպանների աշխատանքային ծանրաբեռնվածության և թարգմանչական ծառայությունների բացակայության պատճառով արդյունավետ իրավաբանական աջակցության հասանելիության հետ կապված՝ Հայաստանում մշտապես առկա մարտահրավերների համատեքստում³⁰:

ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է Օրենքի նախագծի 32-րդ հոդվածը լրացնել հետևյալ դրույթով.

«Սույն օրենքի 24-րդ հոդվածում նշված իրավասու մարմինները, անձանց ձերբակալություն իրականացնող մարմինները և հանձնման մասին որոշումների վերաբերյալ բողոքներ ու կալանավորման վերաբերյալ միջնորդություններ կամ բողոքներ քննող դատարանները ապաստանի ընթացակարգերի մասին տեղեկություններ են տրամադրում հանձնման համար հայցվող անձանց, ովքեր մտահոգություններ են արտահայտում՝ կապված հանձնումով պայմանավորված մարդու իրավունքների լուրջ խախտումների հետ, և անհապաղ նրանց ուղղորդում են ապաստանի հարցերով իրավասու մարմին»:

3.2. Դատական վերանայման և գրավոր/բանավոր թարգմանության իրավունքը (Օրենքի նախագծի 26-րդ և 32-րդ հոդվածներ)

²⁹ Կոնկան ընդդեմ Բելգիայի, 51564/99, Եվրոպայի խորհուրդ. Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 5 փետրվարի 2002թ., պարբ. 44, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.refworld.org/cases,ECHR,3e71fdfb4.html>, Իլյասը և Ահմեդն ընդդեմ Հունգարիայի, Դիմում թիվ 47287/15, Եվրոպայի խորհուրդ. Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 14 մարտի 2017թ., պարբ. 116 և 124, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.refworld.org/cases,ECHR,58c968ad4.html>, Մ.Ս.Ս. ընդդեմ Բելգիայի և Հունաստանի, Դիմում թիվ 30696/09, Եվրոպայի խորհուրդ. Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 21 հունվարի 2011թ., պարբ. 301 և 304, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.refworld.org/cases,ECHR,4d39bc7f2.html>, Հիրսի Ջամասան և մյուսներն ընդդեմ Իտալիայի, Դիմում թիվ 27765/09, Եվրոպայի խորհուրդ. Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 23 փետրվարի 2012թ., պարբ. 204, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.refworld.org/cases,ECHR,4f4507942.html>:

³⁰ Տես Իլյասն ու Ահմեդն ընդդեմ Հունգարիայի, Դիմում թիվ 47287/15, Եվրոպայի խորհուրդ. Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 14 մարտի 2017թ., պարբ. 124, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.refworld.org/cases,ECHR,58c968ad4.html>. «Այսպիսով՝ պարզ է դառնում, որ իշխանությունները դիմողներին չեն տրամադրել բավարար տեղեկություններ ընթացակարգի մասին. իրավիճակ, որն էլ ավելի սրել է այն փաստը, որ նրանք չեն կարողացել դատական լուսմից առաջ հանդիպել իրենց փաստաբանի հետ, որպեսզի մանրամասն քննարկեն իրենց գործը»:

ՄԱԿ ՓԳՀ-ն ողջունում է Օրենքի նախագծում սահմանված համապարփակ դատական վերանայման երաշխիքները և այլ ընթացակարգային իրավունքները և ցանկանում է մի քանի առաջարկություն ներկայացնել, որոնց նպատակն է ավելի հստակեցնել համապատասխան դրույթները՝ համապատասխան չափանիշները և դրանց գործնական արդյունավետությունը ամրապնդելու նպատակով:

26-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ հանձնման ենթակա անձի ներկայությունը վերաքննիչ քրեական դատարանում լուսմների ժամանակ կախված է այդ մասին անձի ուղղակի պահանջից: Հաշվի առնելով հանձնման հնարավոր լուրջ հետևանքները և լավելու իրավունքի երաշխավորման կարևորությունը, ինչպես նաև, մասնավորապես, դատական լուսմներից առաջ հանրային պաշտպանների և հանձնման նպատակով կալանավորված անձանց միջև արդյունավետ հաղորդակցություն և խորհրդակցություններ ապահովելու հետ կապված մշտական մարտահրավերները՝ միգուցե ավելի տեղին է դրույթն այնպես ձևակերպել, որ ենթադրվի անձի մասնակցությունը վերաքննիչ քրեական դատարանում լսմանը, եթե նա ուղղակիորեն չի խնդրում քննությունն իրականացնել իր բացակայությամբ:

ՄԱԿ ՓԳՀ-ն նաև արձանագրում է, որ Օրենքի նախագծի 26-րդ հոդվածի 2-րդ մասը 15-օրյա ժամկետ է նախատեսում վերաքննիչ քրեական դատարանում և վճռաբեկ դատարանում հանձնման մասին որոշումների վերաբերյալ բողոքների քննության համար՝ առանց երկարաձգման հնարավորության: Ապաստանի ընթացակարգերի համատեքստում ՄԱԿ ՓԳՀ-ն հաճախ հիշեցնում է, որ մինչդեռ արդյունավետ ընթացակարգերը կարևոր են, դատական վերանայման ժամկետները չպետք է ազդեն ընթացակարգի արդարության և որակի վրա: Չնայած բոլոր կողմերի շահերից է բխում, որ որակյալ որոշումներ կայացվեն հնարավորինս սեղմ ժամկետում, ժամկետները պետք է կիրառվեն՝ չխախտելով գործի պատշաճ և լիարժեք քննությունը, և պետք է լինեն բավականաչափ ճկուն, եթե փաստերի կամ իրավունքի հետ կապված բարդ խնդիրներ են ծագում, որոնք պահանջում են ժամկետների երկարաձգում³¹: ՄԱԿ ՓԳՀ-ն ցանկանում է նմանատիպ նկատառումներ առաջ քաշել՝ կապված Օրենքի նախագծի 26-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ժամկետի հետ: Իրավունքի պաշտպանության արագ միջոցների կարևորությունն ընդունելով հանդերձ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նույնպես գտել է, որ սա չպետք է գերադասվի ընթացակարգային երաշխիքների արդյունավետությունից³²: ՄԱԿ ՓԳՀ-ն այս առաջարկությունն անում է նաև այն փաստի լույսի ներքո, որ հանձնման գործերի նկատմամբ իրավասությունը փոխանցվելու է առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին, որոնք ներկայումս չունեն նման իրավասություն:

Ինչ վերաբերում է գրավոր/բանավոր թարգմանության իրավունքին, ՄԱԿ ՓԳՀ-ն շատ ողջունելի է համարում թարգմանություն ապահովելու և խնդրո առարկա անձին իր համար հասկանալի լեզվով համապատասխան որոշումների օրինակները տրամադրելու

³¹ Տես հետևյալ փաստաթղթերը, որոնցում ՄԱԿ ՓԳՀ-ն սատարում է ժամկետների հետ կապված ճկունությունը նմանատիպ ընթացակարգային հանգամանքներում. ՄԱԿ փախստականների հարցերով գերագույն հանձնակատար (ՄԱԿ ՓԳՀ), *ՄԱԿ ՓԳՀ դիտարկումները ապաստանի ընթացակարգերի կանոնակարգի մասին Եվրոպական հանձնաժողովի առաջարկության վերաբերյալ*, 2019թ. ապրիլ, COM (2016) 467, էջ 31, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.refworld.org/docid/5cb597a27.html>. ՄԱԿ փախստականների հարցերով գերագույն հանձնակատար (ՄԱԿ ՓԳՀ), *ՄԱԿ ՓԳՀ հայտարարությունը ապահով երկրների հայեցակարգերի և ընդունելիության ընթացակարգերում արդյունավետ պաշտպանության միջոցի իրավունքի վերաբերյալ, որը հրապարակվել է ԼՀ-ն ընդդեմ Բևանդորյասի և Մենեքյուլթյուզի Հիվաթալի գործով Եվրոպական միության արդարադատության դատարան նախնական վճռի համար ուղղորդման համատեքստում (C-564/18)*, 2019թ. սեպտեմբեր, պարբ. 23-25, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.refworld.org/docid/5d7b842c4.html>:

³² *Ի.Մ.-ն ընդդեմ Ֆրանսիայի*, Դիմում թիվ 9152/09, Եվրոպայի խորհուրդ. Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 2 փետրվարի 2012թ., պարբ. 147, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.refworld.org/cases,ECHR,4f2932442.html>:

պահանջը: Այդուհանդերձ, կարծես թե 32-րդ հոդվածի 3-րդ մասում չի հիշատակվում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (Օրենքի նախագծի 26-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես հանձնման մասին որոշումը վերանայելու իրավասություն ունեցող մարմին), երբ թվարկվում են այն դատարանները, որոնք պետք է ապահովեն թարգմանություն և խնդրո առարկա անձի լեզվով կայացված որոշման տրամադրում:

ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է

- Նախատեսել Օրենքի նախագծի 26-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դատական վերանայման ժամկետի երկարաձգման հնարավորություն համապատասխան դատարանների կողմից, երբ բացառիկ հանգամանքները անհնար են դարձնում որոշման կայացումը սահմանված ժամկետում.
- Օրենքի նախագծի 26-րդ հոդվածի 4-րդ մասի առաջին պարբերությունը փոփոխել հետևյալ կերպ.
«Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի դատարանում գործի քննությունն իրականացվում է այն անձի մասնակցությամբ, որի վերաբերյալ կայացվել է հանձնելու մասին որոշումը, իսկ Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քրեական դատարանում գործի քննությունն իրականացվում է այն անձի մասնակցությամբ, որի վերաբերյալ կայացվել է հանձնելու մասին որոշումը, էթե նա ուղղակիորեն չի խնդրում քննությունն իրականացնել իր բացակայությամբ».
- Օրենքի նախագծի 32-րդ հոդվածի 3-րդ մասում ավելացնել առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը այն դատարանների շարքում, որոնք պետք է հանձնման մասին որոշումների դատական վերանայման շրջանակներում ապահովեն թարգմանություն, ինչպես նաև ընդունված որոշման տրամադրումը այն անձի լեզվով, ում հանձնումը հայցվում է:

3.3. Դատապարտված անձի փոխանցման վերաբերյալ համաձայնության ձեռքբերումը

ՄԱԿ ՓԳՀ-ն արձանագրում է, որ Օրենքի նախագծի 53-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով պահանջվում է դատապարտված անձի համաձայնությունը պատժի մնացած մասը կրելու նպատակով իր ծագման երկիր փոխանցման վերաբերյալ: Նույն հոդվածը սահմանում է, որ *«այն դեպքում, երբ ելնելով դատապարտյալի տարիքից, ֆիզիկական կամ հոգեկան վիճակից, հնարավոր չէ վերջինիս գրավոր համաձայնությունը ստանալը, անհրաժեշտ է դատապարտյալի փոխանցման վերաբերյալ նրա օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությունը»:* Այս դրույթի կիրառությունը կարող է խնդրահարույց լինել, երբ խնդրո առարկա անձը փախստական կամ ապաստան հայցող է, որը պաշտպանված է չվերադարձելիության սկզբունքով:

ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է Օրենքի նախագծի 53-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում ավելացնել հետևյալ դրույթը.
«Երբ նման անձը ապաստան հայցող կամ փախստական է, փոխանցումը հնարավոր չէ, նույնիսկ օրինական ներկայացուցչի համաձայնությամբ»:

Եզրափակում

ՄԱԿ ՓԳՀ-ն վստահ է, որ համապատասխան պետական մարմինները, Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը պատշաճ կերպով հաշվի կառնեն ՄԱԿ ՓԳՀ-ի դիտարկումներն ու առաջարկությունները: Հաշվի առնելով նախորդ հաջող փորձը՝ մենք հավատացած ենք, որ համապատասխան շահագրգիռ կողմերի հետ ուղիղ և բաց խորհրդակցային գործընթացի միջոցով Օրենքի նախագիծն էլ ավելի կբարելավվի, որպեսզի ապահովվի համապատասխան չափանիշների և երաշխիքների ներառումը՝ Հայաստանի Հանրապետության՝ փախստականների և մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային և տարածաշրջանային իրավական նորմերով ստանձնած պարտավորություններին համապատասխան: ՄԱԿ ՓԳՀ-ն շարունակում է հասանելի մնալ լրացուցիչ տեխնիկական աջակցության, փորձառության և անհրաժեշտ պարզաբանումների տրամադրման համար:

ՄԱԿ ՓԳՀ, 2020թ. սեպտեմբեր